Երբ թիկնոցիդ մէջ ծածկած դեռ նայուածքներդ ահաբեկ
Գիրկը հասնիս ոսկիի եղբայրներուդ, - չըմոռնա՛ս
Անոնց ըսել թէ ինչպէս Կիլիկիան մորթեցին
Ազատութեան դափներուն նըւագին մէջ դաւաճան.
Գիտեմ թէ այդ եղբայրներըդ մեծագոգ նաւերով
Գալ պիտ՝ ուզեն… օգնութեա՞ն… ո՛հ, ո՛չ… մահուան
մնացորդին.
Պիտ՝ ուզեն գալ լոկ մեր կոյս, ատոք լեռները պեղել,
Եւ մեր ծոցուոր հանքերէն կըթել մետաղն հրաշափառ,
Կըթել մետա՛ղն ու իրենց եսին կուռքերը կերտել…
Օտարակա՞ն, ա՛լ մեկնէ: Կ՝իջնեմ ես ալ աւասիկ
Այս բարձունքէն, ու փաթթուած տառատոկիս մէջ տըրտում՝
Նորէն կ՝երթամ թափառիլ քաղաքին մէջ զոհերուն:
Մեռելներն հարկ է թաղեմ, եւ ողջակէզն օծանեմ:
Վիրաւորի մը գըլուխ որձաքարին կը հեծէ՛…
Աղբիւրին քով քոյր մը, ո՛հ, կ՝ոգեվարի անտերունջ…
Պէտք է փորեմ այս գիշեր գերեզմաններ անհամար,
Եւ լուսեղէն պատանքներ հենում մինչեւ առաւօտ.
Պէտք է կերտեմ շիրիմներ, յուշարձաններ կանգնեմ,
Եւ մարմարին վրայ երգերս տապանագիր քանդակեմ: